ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11 1950 *Общественные науки*

ԳՐԱԽՈՍԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ—«ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»[1]

Մեր պատմական հուշարձանները կարևոր աղբյուրներ են հանդիսանում հայ ժողովրդի պատմության, արվեստի ու ճարտարապետության ուսումնասիրման համար։ Այդ տեսակետից պատմական դիտությունների թեկնածու Կարո Ղաֆադարյանը շնորհակալ գործ է կատարել, ձեռնարկելով հրատարակել գրքույկների մի շարք, որոնց մեջ ներկայացվելու են մեր պատմության մի քանի խոշոր հուշարձանները՝ Սաղմոսավանքը, Հաղպատը, Սանահինը, Խորանաշատը, Մակարավանքը, Տեղերը, Նոր-Վարաղավանքը և այլն։ Այդ շարքի հուշարձանների առաջին հրատարակությունն է «Հովհաննավանքը և նրա արձանագրությունները»։

Մեր պատմագիտությանը վաղուց արդեն հայտնի էր Հովհաննավանքը, բայց մինչև այժմ նա մասնագիտորեն ոչ ոքի կողմից չէր ուսումնասիրվել։ Նույնիսկ նրա կառուցվածքի չափագրությունները և արձանագրությունների մեծ մասը չէր հրատարակվել։

Կ. Ղաֆադարյանի «Հովհաննավանքը և նրա արձանագրությունները», աշխատությունը բաժանված է երկու մասի։ Առաջին մասը վերնագրված է «Հովհաննավանքի ճարտարապետական կառուցվածքները», իսկ երկրորդը՝ «Հովհաննավանքի վիմական արձանագրությունները»։

Առաջին մասում հեղինակը նկարագրում և բանասիրական քննության է ենթարկում Հովհաննավանքի ճարտարապետական կառուցվածքները։ Նա Հովհաննավանքը համարում է հայոց միջնադարյան նշանավոր վանքերից մեկը, որը գտնվում է պատմական Արագածոտն գավառում, Կարբի գյուղից մեկ կիլոմետր դեպի հարավ-արևելք, Դասախ գետի կիրճի բերանին, համանուն գյուղի մեջ։ Հովհաննավանքը ունի երկու եկեղեցի, մեկը միանավ բազիլիկ թաղածածկ շինություն է, իսկ մյուսը՝ գմբեթավոր մի մեծ դահլիճ է, որն իր արևմտյան կողմում ունի ընդարձակ ժամատուն։ Վանքը շրջապատված է ընդարձակ պարսպով։

Տաճարի ճարտարապետական ձևերի և հայ հին մատենագրերի հաղորդած փաստերի ուսումնասիրության հիման վրա հեղինակը համաձայնում է ճարտարապետ Թորոս Թորամանյանի հետ, որ Հովհաննավանքի եկեղեցիների մեջ հնագույնը բազիլիկ տաճարն է և կառուցված է քրիստոնեական ճարտարապետության զարգացման առաջին շրջանում, այսինքն 4-րդ կամ 5-րդ դարերում։ Այնուհետև հեղինակը, առարկելով Թորամանյանին, որ Հովհաննավանքի բազիլիկ տաճարն իր սկզբնական վիճակում թաղակապ կամ կամարածածկ է եղել, հանդամանորեն ապացուցում է, որ նա սկզբում եղել է փայտածածկ, իսկ 5-րդ դարի երկրորդ կեսին կամ 6-րդ դարում փոխվել է թաղակապ ծածկի և այդ վիճակում պահպանվել է մինչև նրա հիմնական վերանորոգման ենթարկվելը, այսինքն մինչև 17-րդ դարի կեսերը։

Հետագայում բազիլիկ տաճարը հիմնական վերանորոգման է ենթարկվել 1731 թվին՝ Աբրահամ կաթողիկոս Թրակեցու (Կրետացու) ժամանակ, իսկ վերջին մասնակի վերանորոգումը կատարվել է Հայկական ՍՍՌ Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից, 1946 թվին։

Ուսումնասիրության առաջին մասի երկրորդ ենթաբաժինը նվիրված է բազիլիկ տաճարի հարավային կողմում շինված կաթողիկե եկեղեցուն։ Մեծ կամ կաթողիկե եկեղեցու կառուցումը սկսվել է 1215 կամ 1216 թվին և ավարտվել է 1221 թվին։ Մեծ եկեղեցու ավարտման թիվը Զաքարիա Սարկավագը (17-րդ դարի պատմիչ) սխալմամբ համարել է 1217 թիվը։ Սակայն հեղինակը եկեղեցու գլխավոր մուտքի ճակատի որմնակամարի վրա փորագրված վիմական արձանա-

---

1 Կարո Ղաֆադարյան—«Հովհաննավանքը և նրա արձանագրությունները», Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակություն, Երևան, 1948 թ., էջ 121։

գրությամբ աշտում է Զաքարիայի սխալը։ «Կաթողիկե եկեղեցին,—գրում է հեղինակը,— իր շինարարության օրվանից մինչև 1652 թվականը ոչ մի փոփոխության չի ենթարկվել... մինչև 1652 թվականը, մոտ 430 տարի, այդ եկեղեցու սկզբնական շինությունը կարողացել է դիմանալ առանց նորոգությունների։ 1652 թվին վանքի առաջնորդ Զաքարիա Վագարշապատցին նորոգում է տաճարը։ 1669 թվի երկրաշարժի ժամանակ քանդվել է եկեղեցու գմբեթի վերին մասը և այն վերանորոգվել է 1682 թվին վանքի առաջնորդ Սարգիս Կարբեցու օրոք։

Մինչև Գ. Լաֆաղարյանի սույն աշխատության լույս տեսնելը մեր գրականության մեջ ճշգրիտ կարծիք չկար Հովհաննավանքի կաթողիկե եկեղեցու կառուցողի մասին։ Զաքարիան կաթողիկե եկեղեցու շինությունը վերագրում է Վաչուտանց Վաչե իշխանին։ Զաքարիայի այդ սխալը հետագայում կրկնել են բոլոր ուսումնասիրողները։ Հեղինակն ընթերցելով եկեղեցու վրա եղած վիմական արձանագրությունները, աշտում է, որ Կաթողիկե եկեղեցու շինության նախաձեռնողը եղել է Աստվածատուր Վանահայրը, որին մեծ չափով օժանդակել է Վաչե իշխանը և ուրիշները։

Երրորդ ենթագլուխը նվիրված է կաթողիկե եկեղեցու ժամատանը, որի շինությունը սկսված է 1217 կամ 1248 թվին և ավարտվել է 1250 թվին։ Ժամատունն առաջին անգամ մասնակի վերանորոգման է ենթարկվել 17-րդ դարում, իսկ վերջին վերանորոգումը կատարվել է Հնությունների Պահպանության Կոմիտեի կողմից։

Չորրորդ և հինգերորդ ենթագլուխները նվիրված են ժամատան հյուսիսագոմյան կից շինությանը և վանքի մյուս շինություններին, որոնք շինված են 12 և 13-րդ դարերում։ Այս ենթագլուխներում նկարագրված են վանքի պարիսպները և ցույց է տրված նրանց շինության ժամանակը՝ այն է 1190-ական թվականներին կամ 13-րդ դարի սկզբին։

Աշխատության առաջին մասի վերջին ենթագլուխը վերնագրված է «Հովհաննավանքը պատմության մեջ։ Այս ենթագլխում հեղինակը աշխատել է շարադրել Հովհաննավանքի համառոտ պատմությունը 5-րդ դարից մինչև 18-րդ դարը ներառյալ։ Ենթագլխի վերջում հեղինակը տվել է 6 կետից բաղկացած իր եզրակացությունները, որոնց մասին մենք կխոսենք վերջում։

Աշխատության երկրորդ մասում հրատարակված են Հովհաննավանքի 80 վիմական արձանագրությունները, որոնցից մինչև այդ հրատարակված են եղել 25-ը Հ. Շախաթունյանցի, Ղ. Ալիշանի, Կ. Կոստանյանցի կողմից, իսկ մնացած 55-ը առաջին անգամ հրատարակում է հեղինակը։ Արձանագրությունները պատկանում են 11—18-րդ դարերին, մեծագույն մասը 13-րդ դարից է։

Հրատարակված բոլոր վիմական արձանագրություններն ունեն շինարարական, նվիրատվության և երկրի ներքին կարգադրությունների բովանդակություն, որոնք կարևոր աղբյուրներ են մեր երկրի անցյալի ներքին կյանքի ուսումնասիրության համար։

Հեղինակն իր սույն աշխատության առաջին մասի վերջին ենթագլուխը վերնագրելով «Հովհաննավանքի պատմության մեջ», ճիշտ նպատակ է դրել իր առաջ՝ տալ ոչ միայն Հովհաննավանքը ճարտարապետական պատմությունն իր նկարագրական մանրամասնություններով, ընդօրինակել և վերծանել վանքի շինությունների վրա եղած վիմական արձանագրությունները, որոնք մեծ արժեք ունեն իրենց ժամանակի հասարակական և ճարտարապետական հարցերի պարզաբանման համար, այլև տալ վանքի մասնակցությունը՝ երկրում կատարվող քաղաքական ու հասարակական կյանքին։

Սակայն այդ տեսակետից հեղինակը իր նպատակին չի հասել։

Հեղինակը հիմնականում կանգ է առել այն հարցի վրա, թե 5-րդ դարից մինչև 18-րդ դարը վանքը՞ինչ առաջնորդներ է ունեցել, աշխատել է ճշտել նրանց առաջնորդության տարեթվերը, ցույց տա, թե նրանցից յուրաքանչյուրի առաջնորդության շրջանում վանքում ինչ շինություններ կամ վերանորոգումներ են կատարվել, վանքն ինչպիսի նվիրատվություններ է ստացել և որոշ չափով էլ նկարագրել է վանքի կուլտուրական գործունեությունը։

Մեր այս ասածն ավելի պարզ ցույց տալու համար բերենք մի ընդարձակ բաղվածք։

«20 Իանագրության թղթից Զաքարիային ծանոթ է Միքայել Վանահայրը, որի գործը և ճիշտ ժամանակը դարձյալ անհայտ է։

21. Այդ նույն, անհայտների շարքին են պատկանում Գրիգոր վարդապետ Կարբեցին (1370 թվին), հայր Մատթեոսը, որ ծանոթ է մի հիշատակարանից (1393 թ.)։ Սա ժամատան մեջ կանգնեցրած է եղել մի խաչքար։ 1399 թվին մի ավետարանի հիշատակարանից ծանոթ է Տեղերի, Վժանի և Հովհաննավանքի առաջնորդ Ղուկաս վանահայրը։ 1616 թվին պատկանող մի ճաշոցի հիշատակարանում հիշվում է Սեթենց Հովասափ վանահայրը, որ ընդեկ Հովհաննավանքցի է։ 1629 թվին հիշատակվում է Հովհաննես Կարբեցի եպիսկո-

պոսը, որին Դայլ մականունն են տվել։ Սրան բազմաթիվ անգամներ հիշում է Զաքարիան իր պատմության մեջ և նշում, որ սա հմուտ պատմագիր է եղել» և այլն։

«22. Ընդարձակ կինոսպրական տեղեկություններ ունենք Հովհաննավանքի նշանավոր առաջնորդ Զաքարիա Վաղարշապատցու մասին, որը ծնված պետք է լինի 17-րդ դարի առաջին թվերին, հավանաբար 1603 կամ 1604 թվին...» (էջ 54)։

Համարյա նույն ձևով շարադրելով ամբողջ ենթագլուխը հեղինակը ոչ մի հիշատակություն չի անում, թե Հովհաննավանքը, որի վանականների թիվը երբեմն (17-րդ դարում) հասնում էր 60—70-ի, ինչպիսի մասնակցություն է ունեցել երկրում կատարվող ժամանակի քաղաքական ու հասարակական կյանքին։ Հետևարար, ամենևին հիմնավորված չէ հեղինակի այն հավաստիացումը, թե «...Հովհաննավանքը հանդես է դալիս իբրև կարևոր կենտրոն, որ մեծ կշիռ է ունեցել ժամանակի դավանաբանական վեճերի, ինչպես նաև Հայաստանի քաղաքական հարցերում» (էջ 56)։

Հիշյալ ենթագլուխը շարադրելիս հեղինակը դրականությունից և վիմական արձանագրություններից մի շարք փաստեր է բերում, որ Հովհաննավանքը հայ կալվածատերերից ու իշխաններից մեծ քանակությամբ կալվածքներ է ստացել որպես նվիրատվություն։ Սակայն անհրաժեշտ էր կոնկրետ փաստերով ցույց տալ, որ Հովհաննավանքը որպես խոշոր կալվածատեր աշխարհիկ կալվածատերերի ու իշխանների փոխադարձ օգնությամբ դարեր շարունակ անլուր շահագործման է ենթարկել հայ աշխատավոր գյուղացիությանը։

Այնուհետև աշխատության հեղինակը որոշ անճշտություններ է կատարել պատմական փաստերի նկատմամբ։ Հեղինակն իր եզրակացությունների մեջ գրում է. «Հովհաննավանքն իր ծաղկման բարձր աստիճանին է հասնում 17-րդ դարում, երբ ընդհանուր առմամբ հայ հասարակական կյանքը խոշոր վերելք էր ապրում» (էջ 56)։ Այդ ընորոշումը խիստ չափազանցություն է։ Հայտնի է, որ 17-րդ դարի սկզբից Շահ-Աբբասի արշավանքներով վերսկսվում են թուրք-պարսկական արյունահեղ պատերազմները, որոնք շարունակվում են մինչև 1639 թիվը։ Այդ պատերազմների ընթացքում հայ ժողովրդին սպառնում է ֆիզիկական բնաջնջում, հարյուր հազարավոր հայեր տեղահան են արվում և քշվում են հայրենի հողից, ավերվում է ժողովրդական տնտեսությունն ու կուլտուրան։

17-րդ դարի այսպիսի իրադարձությունների մեջ ի՞նչ խոսք կարող է լինել «ընդհանուր առմամբ հայ հասարակական կյանքի խոշոր վերելքի» մասին։

Վերոհիշյալ թերությունները չեն նսեմացնում աշխատության արժեքը, բայց ցանկալի է, որ հեղինակն այս կարգի թերություններից զերծ լինի իր ձեռնարկած մյուս պատմական խոշոր հուշարձանների ուսումնասիրության և հրատարակության ընթացքում։

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ